

ՀՈՎԻԻՆ ՀԱՅԸ

Գոմերը հո՛ն եմ, կանգուն,
 Լեռներուն մեջ քըխորակ,
 Երբ գայ ձրմեռ, գայ աշուն,
 Երբ գարնան գայ արեգակ:

Վրան ամայի լեռներուն՝
 Գոմերը շեն կը մրնան.
 Կը բրնակի հոժիւն հոն
 Այծերուն հետ ցաւֆրսան:

Ու գայ երբ քաղցր գիշեր,
 Բուխերիկէն վար հոժերն
 Կ'ըսեն հին հին հեքեաքներ,
 Գամփռերն արի կը հաջեն:

Երբոր դառնայ իրիկուն
 Առօշէն հօտ փարախ,
 Կ'ըլլայ ակուրր ժրաջան,
 Չարքաւ հոժիւր ուրախ.

Ան կ'եփէ լակը գամփռին,
 Կը քրէ հացն իր բուրեան,
 Ու կը նախօժ գայն իրեն
 Պարզ արուեստով լեռնական:

Հոժիւին հացն որ կ'եփի
 Մաղմաղին մեջ, է համեղ
 Ժամուն մասէն աւելի,
 Քալոնի պէս լուսնագեղ:

Կը բաժներ մամրս մինա՛կ
 Օրհնութեամբ մը մեզի գայն
 Որ՜ շուտ ածիմք եւ ըլլանք
 Իր հոժիւները վաղուան:

*Քալոն, պոլսական սիմֆոնի պէս կը որ բայց
 հաստ ու մեծ հաց մը զոր թոնիրին մէջ կ'ե-
 փեն:*

ՋԱՂԱՑՔԸ

Ոչ մրնաց գիւղ, անդասան,
 Ոչ բարսիներ, ոչ ալ գետ.
 Ծրնողքս ու սեռս ալ անցան,
 Մրնացի որք՝ սրսիս հետ,

Սակայն երգը ջաղացին
 Հոգիիս մեջ կը յածի,
 Չայնն հեռակայ ձորակին.
 Գիւղի պարզուկ մեղեդի:

Այնտեղ գիշերը հնչեղ,
 Ծով ու հեքեաք զիմք գրկած.
 Այնտեղ ակուրր անքեղ,
 Պատերն խոնար ու կրքած:

Կը դառնար քարն անդադար,
 Եւ ալիւրը քաշին մեջ
 Շերտ շերտ կ'իյնար կ'առասնար՝
 Մեր լեռներու ձիւնին պէս:

Նախախայրիքն հունձին մեր
 Կ'եփէր մայրիկըս պնտեղ
 Բուռ բուռ ոսկի, արեւներ,
 Ու մանկութեան պէս համեղ:

Գիշերը՝ սեզ ժայռերէն
 Գետը կ'երթար բարկացած.
 Մինչդեռ ջաղացն, հեքեաք հի՛ն,
 Քունի քմբիւրն եր սրսկած:

* * *

ՀԻՆ ՕՐԵՐ

Մայրս ուռեստան կ'երթար շաւառ ժողովելու,
 ֆոյրս իրեն հետ, ցախաւելն ու պարկն ուսած,
 Կը վարէր հովն երբ շաքիւները հեռու
 Ու կը յուզէր աշնան բարտիքն ոսկեգօծ:

Ի՜նչ քաղցր էին, աւա՛ղ, աւա՛ղ, օրերն հին...

Կ'արածէին խոյ՝ եղբայրներս բարի,
 Պապերս երբոր աճումը մեր հօտերուն
 Կը գգուէին լեռներուն վրայ վիթխարի,
 Ուր կ'երգէին արծազանքները հեռուն:

Աւա՛ղ, աւա՛ղ, հին օրերն ի՜նչ քաղցր էին...

Հիմակ, երբ ա՛լ անոնցմէ մարդ չըմբնաց,
 Բարտիներուն կը զգամ սարսուռը դեղին,
 Ի՛նչ արտասուելով հոգիս Թափուր մեր գեղին
 Ուխտի կ'երթայ աւերներուն որբացած:

Փրակա

ԵՐՈՒԱՆԴ ԲՕԶԵԱՆ

ՇԱՆԱՈՒ, ՇԱՔԻՒՆ
